

«Հաստատում եմ»  
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ  
Վարչության նախագահ-  
Գլխավոր տնօրեն  
Հ. Թադևոսյան

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 2017թ.

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ  
2018 – 2020 թթ.

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Գլխավոր տնօրենի տեղակալ-  
գլխավոր ճարտարագետ՝

..... Ա. Հակոբյան

Գլխավոր տնօրենի տեղակալ՝

..... Կ. Մովսեսյան

Գլխավոր տնօրենի տեղակալ՝

..... Ա. Գևորգյան

Գլխավոր տնօրենի տեղակալ՝

..... Տ. Կարապետյան

«Տրանսգազ» ՍՊԸ տնօրեն՝

..... Ն. Գաբրիելյան

ԵՐԵՎԱՆ, 2017թ.

## Բովանդակություն

<b>Ներածություն</b>	<b>3</b>
<b>Բաժին 1. Գազափոխադրման համակարգ</b>	<b>4</b>
1.1. Գազափոխադրման համակարգում ներդրումային ծրագրով նախատեսվող հիմնական միջոցառումները	5
1.2. Գազափոխադրման համակարգում ներդրումային ծրագրով նախատեսվող ներդրումները	5
1.2.1. Նոր մայրուղային գազատարների կառուցում	6
1.2.2. Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում	8
1.2.3. Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում	9
1.2.4. Հողատարածքների, շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի ձեռքբերում	11
1.2.5. Աբովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնում (նոր օբյեկտների կառուցում)	12
<b>Բաժին 2. Գազաբաշխման համակարգ</b>	<b>14</b>
2.1. Գազաբաշխման համակարգում ներդրումային ծրագրով նախատեսվող հիմնական միջոցառումները	15
2.2. Գազաբաշխման համակարգում ներդրումային ծրագրով նախատեսվող ներդրումները	15
2.2.1. Բնական գազի կենցաղային հաշվիչների և արկղերի ձեռքբերում և տեղադրում նոր բաժանորդների համար	16
2.2.2. Անվտանգության համակարգերի ձեռքբերում և տեղադրում	17
2.2.3. Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի, ժամանակակից սարքավորումների, սարքերի և գործիքների ձեռքբերում	18
2.2.4. Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում	20
<b>Բաժին 3. 2018-2020թթ. ամփոփ ներդրումներ</b>	<b>24</b>
Ներդրումային ծրագրով նախատեսվող ներդրումների ամփոփ աղյուսակ	25
Ներդրումային ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	27

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 2018-2020թթ. Ներդրումային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմված է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի, 1 կետի, բ), ը) ենթակետերի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ № 0109 լիցենզիայի 5.13 կետի և № 0111 լիցենզիայի 5.12 կետի պայմաններին համաձայն:

Ծրագրի նպատակն է ապահովել գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում անխափան, հուսալի և անվտանգ գազամատակարարում, բարելավել ծառայությունների մատուցման ու սպասարկման որակի ցուցանիշները, ապահովել Ընկերության հիմնական միջոցների վերարտադրումը, ինչպես նաև ապահովել հանձնաժողովի և իրավասու այլ մարմինների նորմատիվ իրավական ակտերի պահանջների իրականացումը՝ կատարելով անհրաժեշտ միջոցառումների իրականացմանն ուղղված կապիտալ ներդրումներ (այսուհետ՝ ներդրումներ):

Ծրագիրը կազմված է «Տրանսգազ» ՍՊԸ, ինչպես նաև գազամատակարարման և գազիֆիկացման մասնաձյուղերի (ԳԳՄ) կողմից ներկայացված գազամատակարարման համակարգի պահպանմանը, համակարգի հուսալիության բարձրացմանը և անվտանգ շահագործմանն ուղղված լոկալ ծրագրերի հիման վրա:

Ծրագրում ընդգրկված են անհրաժեշտ կապիտալ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները ըստ օբյեկտների, աշխատանքների և ձեռքբերումների անվանացանկի՝ բաշխված ըստ տարիների (2018-2020թթ.), ինչպես նաև 2018թ. իրականացվելիք աշխատանքների և ձեռքբերումների մանրամասն նկարագրությունը, դրանց անհրաժեշտության հիմնավորումը և ակնկալվող արդյունքները:

Ներդրումային ծրագրի հիմնական նպատակներից է հանդիսանում նաև ապահովել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գործունեության շահութաբերության մակարդակը և ֆինանսական կայունությունը:

**Աղյուսակներում ներկայացված ներդրումների գումարային ցուցանիշները բերված են միլիոն ՀՀ դրամով արտահայտված՝ առանց ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ)**

# ԲԱԺԻՆ 1

Գազափոխադրման համակարգ  
(ԳՓՀ)

## Բաժին 1. Գազափոխադրման համակարգ

### 1.1. Ծրագրով նախատեսվող հիմնական միջոցառումները

Գազափոխադրման համակարգում Ծրագրով նախատեսվում են հետևյալ հիմնական միջոցառումները՝

1. Մայրուղային նոր գազատարների կառուցում
2. Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում
3. Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում
4. Հողատարածքների, շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի ձեռքբերում
5. Աբովյանի ԳՄՊԿ-ի ընդլայնում (նոր օբյեկտների կառուցում)

### 1.2. Ներդրումային ծրագրով նախատեսվող ներդրումները

Սույն ենթաբաժնում ներկայացվում են գազափոխադրման համակարգում 2018-2020թթ. ընթացքում նախատեսվող ներդրումները: Միջոցառումներում ընդգրկված աշխատանքների անվանացանկը և ծավալագումարային ցուցանիշները մշակելիս հիմք են ընդունվել նախագծանախահաշվային փաստաթղթերը, նախապես անցկացված հետազոտման և ախտորոշման արդյունքների հիման վրա կազմված թերությունների ակտերը, նմանատիպ օբյեկտների արժեքի հիման վրա կատարված նոր գնահատականները, ինչպես նաև ԳՄՊԿ-ի համալիրի վերակառուցման ծրագիրը:

2018-2020թթ. նախատեսվող միջոցառումները և նրանց համապատասխան ներդրումների գումարները ամփոփ տեսքով ներկայացված են ստորև բերված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Գազափոխադրման համակարգում նախատեսվող ներդրումները ամփոփ տեսքով  
ըստ հիմնական միջոցառումների

№	Միջոցառումների անվանումը	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)		
		2018թ.	2019թ.	2020թ.
1.2.1.	Նոր մայրուղային գազատարների կառուցում	2 555.06	1 828.50	3 300.00
1.2.2.	Ժամանակակից տեխնիկայի ձեռքբերում՝ սարքավորումներ, սարքեր և գործիքներ	36.78	0.00	0.00
1.2.3.	Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում	254.92	701.43	160.76
1.2.4.	Հողատարածքների, շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի ձեռքբերում	3.00	3.00	3.00
1.2.5.	Աբովյանի ԳՄՊԿ-ի ընդլայնում (նոր օբյեկտների կառուցում)	145.67	630.12	18 698.23
<b>Ընդամենը՝</b>		<b>2 995.43</b>	<b>3 163.05</b>	<b>22 161.99</b>

*Ստորև ներկայացված են գազափոխադրման համակարգում 2018-2020թթ.-ին նախատեսվող միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները, ըստ համապատասխան աշխատանքների և ձեռքբերումների, ինչպես նաև 2018 թվականի ընթացքում կատարվելիք աշխատանքների մանրամասն նկարագրությունը և կատարման անհրաժեշտության հիմնավորումը:*

1.2.1. Նոր մայրուղային գազատարների կառուցում

- Կարմիր Կամուրջ-Ալավերդի Dպ-700 գազատարի կառուցում (տեղափոխում Վրաստանի տարածքից)*

Նշված գազատարը կառուցվել և շահագործման է հանձնվել 1985 թվականին: Հայ-վրացական սահմանի ուղեգիծն այնպիսինն է, որ տվյալ գազատարը անցնելով Վրաստանի հետ սահմանամերձ գոտով (21-րդ կիլոմետրում)՝ անցնում է Վրաստանի տարածք (մոտ 2.6 կմ), որից հետո գազատարը շարունակվում է Հայաստանի տարածքով: Արդյունքում՝ նշված հատվածի գազատարի սպասարկումը դառնում է անհնար և դրա տեխնիկական վիճակի վերաբերյալ չկա անհրաժեշտ տեղեկատվություն:

Տվյալ օբյեկտի իրականացման նպատակով 2016թ. կատարվել են նախագծա-հետազոտական աշխատանքներ, որոնք ավարտվել են նույն տարվա դեկտեմբեր ամսին

(ընդունման-հանձնման ակտ 25.01.2017թ. №12), իսկ փորձաքննության եզրակացությունը ստացվել է 20.04.2017թ. (№ ՅՈՒ-2/17-1):

Շինարարական աշխատանքները սկսվել են 2017 թ.-ին, իսկ ավարտն ու օբյեկտի շահագործման հանձնումը նախատեսվում է 2018թ. դեկտեմբեր ամսին:

□ **Ղազախ-Երևան-ԳՄՊԿ գազատարի Dս700 լուպինգի կառուցում**

ՀՀ գազամատակարարման և գազաֆիկացման գլխավոր սխեմայով և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 2018-2020թթ. ներդրումային ծրագրով նախատեսված է Աբովյանի ԳՄՊԿ-ի նոր կոմպրեսորային կայանի շինարարությունը, որի նախագծային հզորությունը կազմում է  $Q_{ներ.}=3.0$  մլն մ<sup>3</sup>/օր,  $Q_{արտ.}=14.0$  մլն մ<sup>3</sup>/օր:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է կառուցել Dս700 պայմանական տրամագծով լուպինգ (շրջանցող գազատար) և 18 կմ երկարությամբ (միացման հատվածը Ղազախ-Երևան գազատարի 142 կմ-ում): Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակումը նախատեսված է 2017-2018թթ.-երին, իսկ շինարարական աշխատանքների իրականացումը նախատեսվում է հետագա տարիներին:

□ **Վարմիր Կամուրջ-Սևքար-Բերդ Dս1000 գազատարի ԿՄ0.0-:-15.0 հատվածի լուպինգի կառուցում**

Ռուսական գազի ներմուծումը Հայաստան իրականացվում է «Հյուսիսային Կովկաս-Անդրկովկաս» գազատարով, որը կառուցվել է 1980-ական թվականներին: Գազատարի վերջնական 15 կմ-ոց հատվածը՝ Վարմիր Կամուրջ-Սևքար-Բերդ գազատարը, անցնում է Վրաստանի տարածքով, որը հրատապ կերպով կառուցվել է 1992 թ.-ին: Նշված գազատարի 12 կմ հատվածն անցնում է Վրաստանի ադրբեջանաբնակ տարածքներով, իսկ 3 կմ հատվածը ՀՀ տարածքով՝ հայ-ադրբեջանական սահմանին հարակից հատվածներով (200-600 մ):

Հայ-ադրբեջանական հակամարտության արդյունքում գազատարին հարակից որոշ տարածքներ ականապատվել են և պարբերաբար հայտնվում են հրաձգության տակ: Նշյալ պատճառով գազատարը շուրջ 25 տարի չի սպասարկվել և չեն կատարվել խողովակաշարի հետազոտման աշխատանքներ:

Հաշվի առնելով Հայաստանի համար գազատարի ռազմավարական նշանակությունը՝ դրա անխափան և անվտանգ շահագործման ապահովման նպատակով որոշվել է նշված խողովակաշարի ինչպես Վրաստանով անցնող 12 կմ-ոց հատվածը, այնպես էլ ՀՀ-ով անցնող 3 կմ-ոց հատվածը տեղափոխել (վերատեղադրել) անվտանգ տարածք:

Ներկայումս Վրաստանի էներգետիկայի նախարարության և Վրաստանի նավթագազային ընկերության հետ տարվում են բանակցություններ գազատարի հետազոտման, գազատարի նոր ուղեգծի ընտրության, հողհատկացման, ինչպես նաև աշխատանքների իրականացման անվտանգությունը ապահովելու վերաբերյալ:

Նշյալ աշխատանքների նախագծա-հետազոտական աշխատանքների իրականացումը նախատեսվում է 2018-2019թթ., իսկ շինարարական աշխատանքների իրականացումը՝ 2019-2021թթ.: Աշխատանքների ընդհանուր արժեքը կկազմի շուրջ 8370 մլն դրամ:

**Ստորև ներկայացված են մայրուղային գազատարների կառուցման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները**

Աղյուսակ 1.2.1

Նոր մայրուղային գազատարների կառուցում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՍ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)						
			2018թ.		2019թ.		2020թ.		
			բան.	գումար	բան.	Գումար	բան.	Գումար	
1	Կարմիր Կամուրջ-Ալավերդի Ծայ-700 գազատարի կառուցում (տեղափոխում Վրաստանի տարածքից)	կմ	5.83	2 456.83			0		0.00
	<i>շին-մոնտաժային աշխատանքների արժեքը</i>	<i>կմ</i>	5.28	2163.24			0		0.00
	<i>Անավարտ շինարարություն՝ 2016-2017 թթ. կատարված ծախսեր</i>	<i>կմ</i>	0.55	293.59					
2	Ղազախ-Երևան-ԳՄՊԿ գազատարի Ծայ700 լուպինգի կառուցում (2017 թ.-ին՝ ՆՆՓ-ի մշակում)	կմ	18	56.23			0.00		0.00
	<i>ՆՆՓ մշակում</i>			56.233			0		0
3	Կարմիր Կամուրջ-Սևքար-Բերդ Ծայ1000 գազատարի ԿՄ0.0-:15.0 հատվածի լուպինգի կառուցում	կմ	15	42.00	3	1 828.50	6	3 300.0	
	<i>շին-մոնտաժային աշխատանքների արժեքը</i>	<i>կմ</i>		0	3	1 755.00	6	3 300.00	
	<i>ՆՆՓ մշակում</i>			42.00		73.50			0.00
<b>Ընդամենը՝</b>				<b>2 555.06</b>		<b>1 828.50</b>		<b>3 300.00</b>	

**1.2.2. Ժամանակակից տեխնիկայի ձեռքբերում՝ սարքավորումներ, սարքեր և գործիքներ**

Ժամանակակից տեխնիկայի ներդրման միջոցառումները ընդգրկում են գործողությունների համակարգ (ձեռքբերում, տեղակայում և հավաքակցում), որոնք ուղղված են հիմնական նպատակների իրականացմանը՝ համապատասխանեցնելով



ուղրտում և ձեռնարկությունում գործող նորմերին և ստանդարտներին: Վերոնշյալ խնդիրները լուծելու նպատակով Ծրագրով նախատեսվում են աղյուսակ 1.2.2-ում բերված միջոցառումները:

**Ստորև բերված են ժամանակակից տեխնիկայի ձեռքբերման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները**

Աղյուսակ 1.2.2

Ժամանակակից տեխնիկայի ձեռքբերում՝ սարքավորումներ, սարքեր և գործիքներ

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)					
			2018թ.		2019թ.		2020թ.	
			քան.	գումար	քան.	գումար	քան.	գումար
1	Ներսաչափի ձեռքբերում՝ HMT (Micron) տիպի կամ նմանատիպ	հատ	1	1.30		0.00		0.00
2	Երկարության չափման հավաքածուի ձեռքբերում՝ КМД տիպի կամ նմանատիպ	կումպ.	1	0.80		0.00		0.00
3	Խտաչափերի համար "KROHNE" DK32 տիպի (0÷10 լ/ժ չափման տիրույթով) ռոտամետրի (ծախսաչափի) ձեռքբերում	հատ	4	5.80		0.00		0.00
4	Խողովակափնտրիչ սարքերի ձեռքբերում	հատ	2	6.00		0.00		0.00
5	Դաշտային գազափնտրիչ սարքերի ձեռքբերում	հատ	3	13.77		0.00		0.00
6	Շարժական գազափնտրիչ սարքերի ձեռքբերում	հատ	20	3.00		0.00		0.00
7	Պայթյունաանվտանգ շարժական լապտերների ձեռքբերում՝ FP-BC Ekoton -3 տիպի	հատ	105	6.11		0.00		0.00
<b>Ընդամենը՝</b>				<b>36.78</b>		<b>0.00</b>		<b>0.00</b>

**1.2.3. Ավտոտրանսպորտային միջոցների, մեխանիզմների ձեռքբերում**

2018-2020թթ.-ին նախատեսված մեքենա-մեխանիզմների ձեռքբերումը պայմանավորված է, ինչպես շահագործման մեջ գտնվող և ֆիզիկապես մաշված մեքենա-մեխանիզմների նորերով փոխարինմամբ, այնպես էլ դրանց համալրմամբ՝ գծային շահագործման մասնաճյուղերում մայրուղային գազատարների և նրանց վրա տեղակայված ինժեներական կառույցների շահագործման և սպասարկման աշխատանքները պատշաճ մակարդակով իրականացնելու համար:

Համաձայն «Գազպրոմ» ՀԲԸ մայրուղային գազատարների շահագործման համար «Գազպրոմ» ԲԲԸ գազափոխադրման դուստր ընկերությունների ստորաբաժանումների ավտոմոբիլային, ճանապարհաշինարարական և հատուկ տեխնիկայով

համալրվածության նորմերի» (СТО Газпром 2-1.22-844-2014 «Нормативы оснащённости подразделений дочерних газотранспортных обществ ОАО «Газпром» автомобильной, дорожно-строительной и специальной техникой для обеспечения эксплуатации магистральных газопроводов ОАО «Газпром»») պահանջների՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գազափոխադրման համակարգի մեքենա-մեխանիզմներով համալրվածությունը կազմում է շուրջ 30.4%:

2018թ. Ծրագրում ներառված են թվով 7 առաջնահերթ անհրաժեշտ ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերումը:

**Ստորև ներկայացված են ավտոտրանսպորտային միջոցների, մեխանիզմների ձեռքբերման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները**

Աղյուսակ 1.2.3

Ավտոտրանսպորտային միջոցների, մեխանիզմների ձեռքբերում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)					
			2018թ.		2019թ.		2020թ.	
			քան.	գումար	քան.	գումար	քան.	գումար
	<b>Մեքենաների և մեխանիզմների ձեռքբերում, այդ թվում՝</b>		7	<b>254.92</b>	19	<b>701.43</b>	11	<b>160.76</b>
1	Էքսկավատոր-հիդրավլիկ թրթռուավոր մինչև 1,85մ <sup>3</sup> շերտփի տարողությամբ, JCB JS370LC մակնիշի կամ նմանատիպ	հատ	1	190.00	1	190.00	0	0.00
2	Ավտոամբարձիչ՝ 25տ բեռնատարողությամբ KC-45717A-1P MA3-6312 մակնիշի կամ նմանատիպ	հատ	1	35.00	1	35.00	1	35.00
3	Բեռնատար ավտոմեքենա՝ YA3 390995 մակնիշի կամ նմանատիպ	հատ	2	11.60	3	17.40	2	11.60
4	Բեռնատար ավտոմեքենա՝ YA3 3303 մակնիշի կամ նմանատիպ	հատ	1	5.60	0	0.00	1	5.60
5	Մարդատար ավտոմեքենա՝ Շելլոլե Նիվա մակնիշի կամ նմանատիպ*	հատ	2	12.72	3	19.08	2	12.72
6	Ինքնաթափ ավտոմեքենա՝ MA3-6501B5 մակնիշի կամ նմանատիպ	հատ		0.00	1	26.00		0.00
7	Խողովակատեղադրիչ TP 20.22.01 մակնիշի կամ նմանատիպ	հատ		0.00	2	130.00		0.00
8	Ամբարձիչ-էքսկավատոր անիվավոր, հազեցած հիդրոնուրձով և խրամուղային շերտփով (0.17մ <sup>3</sup> ) JCB 4CX մակնիշի կամ նմանատիպ	հատ		0.00	1	48.93		0.00
9	Էքսկավատոր-հիդրավլիկ անիվավոր մինչև 1.19մ <sup>3</sup> շերտփի տարողությամբ, հազեցված հիդրոնուրձով և խրամուղային շերտփով	հատ		0.00	1	140.00		0.00

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)					
			2018թ.		2019թ.		2020թ.	
			քան.	գումար	քան.	գումար	քան.	գումար
10	Ամբարձիչ-էքսկավատոր անիվավոր, հազեցած հիդրոմուրձով և խրանուղային շերտիով (0.17մ <sup>3</sup> ) JCB 3CX մակնիշի կամ նմանատիպ	հատ		0.00	1	38.22	2	76.44
11	Շարժական էլեկտրագողիչ ագրեգատ ԱՂԴ կամ նմանատիպ	հատ		0.00	4	16.80	2	8.40
12	Բուլդոզեր 125կՎտ հզորությամբ	հատ		0.00	1	40.0		0.00
13	Բեռնատար ավտոմեքենա՝ ԴԱ3-3309 մակնիշի կամ նմանատիպ	հատ		0.00		0.00	1	11.00
<b>Ընդամենը՝</b>				<b>254.92</b>		<b>701.43</b>		<b>160.76</b>

\*Հիմք ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետը՝ մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման գումարները ներկայացված են ԱԱՀ-ով:

**1.2.4. Հողատարածքների, շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի ձեռքբերում**

ՀՀ Կառավարության 08.01.2009թ. №84-Ն և 20.05.2011թ. №683-Ն որոշումների համաձայն, 2018-2020թթ. ընթացքում նախատեսվում է Սյունիքի մարզի մի շարք համայնքների վարչական սահմաններում գտնվող, բնակիչների սեփականությունը հանդիսացող հողատարածքներով անցնող «Իրան-Հայաստան» մայրուղային գազատարի երկրորդ հատվածի հողատարածքների ձեռքբերում: Մասնավորապես, նախատեսվում է ձեռքբերել 4.5 հա հողատարածք, յուրաքանչյուր տարի՝ 1.5 հա:

*Ստորև բերվում են հողատարածքների, շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի ձեռքբերման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները՝*

Աղյուսակ 1.2.4

Հողատարածքների, շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի ձեռքբերում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)					
			2018թ.		2019թ.		2020թ.	
			քան.	գումար	քան.	գումար	քան.	գումար
1	Հողատարածքների (հողամասերի) ձեռքբերում	հա	1.5	3.00	1.5	3.00	1.5	3.00
<b>Ընդամենը՝</b>				<b>3.00</b>		<b>3.00</b>		<b>3.00</b>

**1.2.5. Արովյանի ԳՄՊԿ-ի ընդլայնում (նոր օբյեկտների կառուցում)**

ՀՀ բնական գազի անխափան մատակարարման անընդհատության ապահովման հարցում կարևորագույն և առանձնահատուկ դեր է կատարում Աբովյանի ԳՍՊԿ-ն՝ հանրապետություն գազի ներկրման դադարեցման կամ սահմանափակման ժամանակահատվածներում:

Աբովյանի ԳՍՊԿ-ն ապահովում է՝

- գազասպառման սեզոնային և պիկային անհամաչափությունների կարգավորումը,
- կարևորագույն սպառողների գազամատակարարման հուսալիությունը:

Դժվար է գերազնահատել Աբովյանի ԳՍՊԿ-ի դերն ու նշանակությունը հանրապետության սպառողների հուսալի և անվտանգ գազամատակարարման ապահովելու հարցում:

Վրաստանի տարածքով անցնող մայրուղային գազատարի տեխնիկական անբավարար վիճակը իր մեջ պարունակում է գազատարի և գազափոխադրման համակարգի այլ օբյեկտներում լուրջ վթարների վտանգ, ինչի հետևանքով կարող է խափանվել հանրապետություն գազի մատակարարումը:

Հաշվի առնելով ՀՀ կախվածությունը ներկրվող էներգառեսուրսներից՝ Աբովյանի ԳՍՊԿ-ն հանդիսանում է էներգետիկ անվտանգության և անկախության իրական երաշխիք: Անհրաժեշտ է նշել, որ էներգետիկ ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում Աբովյանի ԳՍՊԿ-ի նորմալ գործունեության ապահովումը և միաժամանակ ստորգետնյա պահեստարանում բնական գազի բավականաչափ ծավալների պահեստավորման համար անհրաժեշտ տեխնիկական և ֆինանսական պայմանների ապահովումը: Աբովյանի ԳՍՊԿ-ն Իրան-Հայաստան գազատարի հետ համատեղ կարևորագույն տեղ են զբաղեցնում բնական գազով հանրապետության մատակարարման ուղիների դիվերսիֆիկացման ռազմավարական սխեմայում:

Աբովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնման և նորմալ աշխատանքային վիճակի պահպանման ուղղությամբ Ծրագրով նախատեսված են հետևյալ աշխատանքները՝

- Նոր ճնշակայանի շինարարության տեխնիկա-տնտեսական հիմնավորում, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում և ճնշակայանի կառուցում:
- նոր գազահորի կառուցում:

Նոր ճնշակայանի շինարարության անհրաժեշտության մասին են փաստում ճնշակայանի մեքենաների բարոյապես և ֆիզիկապես ամբողջովին մաշվածությունը, հաճախակի շարքից դուրս գալը, ՀՀ գազամատակարարման և գազաֆիկացման գլխավոր սխեմայով նախատեսված բնական գազի տարեկան ներմդման և օրական արտամդման համար անհրաժեշտ արտադրողականությամբ հզորությունների բացակայությունը (մինչև 2028թ.-ի հեռանկարով): 2017թ.-ին ավարտին են հասցվել նոր ճնշակայանի կառուցման

տեխնիկա-տնտեսական հիմնավորման և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները, իսկ կառուցումը նախատեսվում է 2019-2022 թվականներին:

Աբովյանի ԳՍՊԿ-ի զարգացման և ընդլայնման ծրագրի շրջանակներում, ինչպես նաև ՀՀ գազամատակարարման և գազաֆիկացման գլխավոր սխեմայով նախանշված գազի պահեստավորման ծավալներն ապահովելու նպատակով, Ծրագրով նախատեսվում է իրականացնել՝

- № 23 գազահորի շինարարություն

**Ստորև բերվում են Աբովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնման (նոր օբյեկտների կառուցում) համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները**

Աղյուսակ 1.2.5

Աբովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնում (նոր օբյեկտների կառուցում)

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)					
			2018թ.		2019թ.		2020թ.	
			բան.	գումար	բան.	գումար	բան.	գումար
1.	<i>Նոր ճնշակայանի կառուցում</i>		0.00		412.62		18 698.23	
1.1	Նոր ճնշակայանի կառուցում		0.00		412.62		18 698.23	
2.	<i>Նոր գազահորերի շինարարություն</i>		145.67		217.50		0.00	
2.1	№ 23Գ գազահորի շինարարություն		145.67		217.50		0.00	
<b>Ընդամենը՝</b>			<b>145.67</b>		<b>630.12</b>		<b>18 698.23</b>	

## ԲԱԺԻՆ 2

### Գազարաշխման համակարգ (ԳԲՀ)

## Բաժին 2. Գազաբաշխման համակարգ

### 2.1. Ծրագրով նախատեսվող հիմնական միջոցառումները

Անխափան և հուսալի գազամատակարարման շարունակականությունն ապահովելու, ծառայությունների մատուցման ու սպասարկման որակի ցուցանիշները բարելավելու, ինչպես նաև հանձնաժողովի և իրավասու այլ մարմինների նորմատիվ իրավական ակտերի պահանջների իրականացումն ապահովելու նպատակով, Ծրագրում ընդգրկված են հետևյալ հիմնական միջոցառումները՝

1. Բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերում և տեղադրում նոր բաժանորդների համար
2. Անվտանգության համակարգերի ձեռքբերում և տեղադրում
3. Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի, ժամանակակից սարքավորումների, սարքերի և գործիքների ձեռքբերում
4. Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում

### 2.2. Ծրագրով նախատեսվող ներդրումները

Սույն ենթաբաժնում ներկայացվում են 2018-2020թթ. ընթացքում գազաբաշխման համակարգում նախատեսվող ներդրումները: 2018-2020թթ.-ին կատարվելիք աշխատանքների ծավալագումարային ցուցանիշները ամփոփ տեսքով ներկայացված են աղյուսակ 2-ում:

Միջոցառումները մշակելիս կիրառվել է տեղայնացված մոտեցում, հիմք են ընդունվել տեղերում կատարված հետազոտման և ախտորոշման արդյունքները և նրանց հիման վրա մշակված նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և կազմված թերությունների ակտերը:

Ենթաբաժիններում ներկայացված են 2018-2020թթ.-ին նախատեսվող աշխատանքների ծավալագումարային ցուցանիշները և 2018 թվականի ընթացքում կատարվելիք աշխատանքների մանրամասն նկարագրությունը:

Աղյուսակ 2

Գազարաշխման համակարգում նախատեսվող ներդրումները  
ամփոփ տեսքով

№	Միջոցառումների անվանումը	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)		
		2018թ.	2019թ.	2020թ.
2.2.1	Բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերում և տեղադրում նոր բաժանորդների համար	380.00	313.00	272.00
2.2.2	Անվտանգության համակարգերի ձեռքբերում և տեղադրում	324.50	265.50	221.25
2.2.3	Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի, ժամանակակից սարքավորումների , սարքերի և գործիքների ձեռքբերում	331.68	403.94	251.69
2.2.4	Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում	528.96	583.32	359.49
<b>Ընդամենը՝</b>		<b>1 565.14</b>	<b>1 565.76</b>	<b>1 104.43</b>

*Ստորև բերված են գազարաշխման համակարգում 2018-2020թթ.-ին նախատեսվող միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները ըստ համապատասխան աշխատանքների և ձեռքբերումների, ինչպես նաև 2018 թվականի ընթացքում կատարվելիք աշխատանքների մանրամասն նկարագրությունը, նրանց կատարման անհրաժեշտության հիմնավորումը և ակնկալվող արդյունքները:*

**2.2.1. Բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերում և տեղադրում նոր բաժանորդների համար**

Հանրապետության տարածքում Ընկերության և այլ կազմակերպությունների կողմից իրականացված բնակավայրերի գազաֆիկացման արդյունքում կառուցված գազարաշխիչ ցանցը հնարավորություն է ընձեռում ավելի քան 770.0 հազար տնտեսությունների օգտվելու բնական գազից, փաստացի բաժանորդների (կենցաղային) թիվը կազմում է ավելի քան 685.0 հազար, իսկ պոտենցիալ բաժանորդների թիվը՝ ավելի քան 85.0 հազար: Առկա պոտենցիալից շարունակվելու են նոր բաժանորդների ավելացմանն ուղղված



աշխատանքները:

Նախատեսվում է, որ պոտենցիալ բաժանորդներից ևս 9000-ը 2018թ.-ին, 7500-ը՝ 2019թ.-ին և 6500-ը՝ 2020թ.-ին կարող են դառնալ փաստացի բաժանորդներ, որոնց համար պետք է տեղադրվեն համապատասխան քանակի G-4 և G-6 տիպի բնական գազի կենցաղային հաշվիչներ՝ իրենց պաշտպանիչ արկղերով:

**Ստորև բերված են բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերման և տեղադրման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները**

Աղյուսակ 2.2.1

Բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերում և տեղադրում նոր բաժանորդների համար

N	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)					
			2018թ.		2019թ.		2020թ.	
			քան.	գումար	քան.	գումար	քան.	գումար
1.	Նոր բաժանորդների համար բնական գազի G-4 կամ G-6 տիպի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի տեղադրում	հատ	9 000	380.00	7 500	313.00	6 500	272.00
<b>Ընդամենը՝</b>				<b>380.00</b>		<b>313.00</b>		<b>272.00</b>

**2.2.2. Անվտանգության համակարգերի ձեռքբերում և տեղադրում**

2018-2020թթ. Ներդրումային ծրագրով նախատեսվում է տեղադրել 27500 հատ ազդանշանային սարքեր և ինքնաշխատ վթարային կափույրներ՝ 811.25 մլն դրամ արժեքով: 2018 թվականին նախատեսվում է տեղադրել 11000 հատ ազդանշանային սարքեր և ինքնաշխատ վթարային կափույրներ 324.5 մլն. դրամ ընդհանուր արժեքով, որից 9000-ը՝ նոր միացվող բաժանորդների բնակարաններում, իսկ 2000-ը դեռևս ազդանշանային սարքեր և ինքնաշխատ վթարային կափույրներ չտեղադրված, գազիֆիկացված բնակարաններում (ներկայումս «փակ դուռ» հանդիսացող բնակարաններ):

**Ստորև բերվում են անվտանգության համակարգերի ձեռքբերման և տեղադրման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները**

Աղյուսակ 2.2.2

Անվտանգության համակարգերի ձեռքբերում և տեղադրում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)					
			2018թ.		2019թ.		2020թ.	
			քան.	գումար	քան.	գումար	քան.	գումար
1	Գազի ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում	հատ	11000	324.50	9000	265.50	7500	221.25
<b>Ընդամենը՝</b>				<b>324.50</b>		<b>265.50</b>		<b>221.25</b>

**2.2.3. Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի, ժամանակակից սարքավորումների, սարքերի և գործիքների ձեռքբերում**

2018-2020թթ. Ներդրումային ծրագրով նախատեսվող համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերման քանակները հաշվարկելիս հաշվի է առնվել՝

- ընկերությունում փաստացի առկա աշխատողների քանակը համադրելով առկա գույքի քանակների հետ,
- ԳԳՄ-երի կողմից նախապես ներկայացված հայտերը,
- փաստացի առկա գույքի օգտակարության գործակիցը (համակարգչային տեխնիկա՝ 5 տարին լրացած, կահույք՝ 10 տարին լրացած):

2018-2020թթ. նախատեսվող համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերման գումարային ծավալները հաշվարկելիս հաշվի է առնվել ներկայումս մատակարար ընկերությունների հետ կնքված պայմանագրերով սահմանված ապրանքների միավոր գները:

Համակարգիչները վնասակար ծրագրերից պաշտպանելու նպատակով նախատեսվում է ձեռքբերել հակավիրուսային ծրագրի արտոնագրեր, իսկ համակարգիչների աշխատանքի ծրագրային անխափանությունն ապահովելու նպատակով՝ ձեռքբերել կիրառական ծրագրերի փաթեթներ, օպերացիոն համակարգեր և այլն:

Նախատեսվում է նաև ձեռքբերել սերվերներ և սերվերային սարքավորումներ: Մասնավորապես, տեղեկատվական անվտանգության միջոցառումների իրականացման նպատակով անհրաժեշտ է ձեռքբերել DELL PowerEdge T430 սերվերներ, ինչպես նաև DELL Storage SCv2020 տվյալների պահպանման համակարգ, որը նախատեսված է համակարգատեխնիկական ենթակառուցվածքի պահուստային պատճենների և տվյալների պահպանման համակարգերի աշխատանքի կազմակերպման համար, իսկ E token Pro Java 72K էլեկտրոնային բանալիները նախատեսված են «Գազպրոմ» ՀԲԸ

տեղեկատվական ղեկավարման համակարգերին միանալու համար:

2018-2020թթ. Ներդրումային ծրագրով նախատեսվում է նաև՝

- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 1-04 ՎԿԾ-ներում, ԳԳՄ-ների սպասարկման տարածքներում գազատարների շրջայցային սպասարկման համար և Երևանի ԳԳՄ Ախտորոշման բաժնում առկա ոչ պիտանի հոսքափնտրիչ-գազավերլուծիչների փոխարինում, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան անհրաժեշտ քանակի ապահովում (2018թ. -ին՝ 104 հատ ՓՊ-22),
- Ուլտրաձայնային հաստաչափ պողպատյա խողովակների պատերի հաստությունը չափելու համար «Բուլատ-1Ս» կամ նմանատիպ (15 հատ),
- Գրունտի տեսակարար դիմադրության, և հողանցման դիմադրության չափման սարք օհմմետր ԻՍ-20/1 կամ նմանատիպ (15 հատ),
- Չափիչ անիվ M100 NIVEL SYSTEM կամ նմանատիպ (15 հատ),
- GPS նավիգատոր - Origin-650 կամ նմանատիպ (15 հատ),
- Պոտենցիալների չափիչ սարք ИПП-1 կամ նմանատիպ (15 հատ),
- Պղնձատուլֆատային էլեկտրոդ պոտենցիալների չափման համար ЭМС-К-0.4 կամ նմանատիպ (30 հատ),
- Ձողակարկին IIII-I-125-0.1 կամ նմանատիպ (15 հատ):

Ծրագրում ներառված մնացած սարքավորումները, սարքերը և գործիքները նախատեսված են «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղի ծառայությունները համալրելու նպատակով՝ համաձայն «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղի ծառայությունները կոռոզիայից պաշտպանման մասով մեքենաներով, սարքերով, սարքավորումներով և գործիքներով համալրվածության նորմերի» (հաստատված համաձայն Р Газпром 9.2-025-2013 «Ստորգետնյա կառույցների ԷՔՊ միջոցների շահագործման կանոնների» (Р Газпром 9.2-025-2013 «Правила эксплуатации средств ЭХЗ подземных сооружений»)):

***Ստորև բերված են համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի, ժամանակակից սարքավորումների , սարքերի և գործիքների ձեռքբերման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները.***

Աղյուսակ 2.2.3

Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի, ժամանակակից սարքավորումների և սարքերի ձեռքբերում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՍ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)					
			2018թ.		2019թ.		2020թ.	
			քան.	գումար	քան.	գումար	քան.	գումար
1	Համակարգչային և կազմակերպչական տեխնիկայի ձեռքբերում	-	64.60		64.60		64.60	
2	Մերվերների, սերվերային սարքավորումների, ծրագրային ապահովումների և	-	36.94		256.11		104.40	

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)					
			2018թ.		2019թ.		2020թ.	
			քան.	զումար	քան.	զումար	քան.	զումար
	արտոնագրերի ձեռքբերում							
3	Գույքի ձեռքբերում	-	44.70		44.70		44.70	
4	Չափիչ և հատուկ նշանակության սարքավորումների, սարքերի և գործիքների ձեռքբերում	-	185.44		38.53		37.99	
<b>Ընդամենը՝</b>			<b>331.68</b>		<b>403.94</b>		<b>251.69</b>	

### 2.2.4. Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում

Գազատարների շինարարության և շահագործման, ինչպես նաև համակարգում վթարային աշխատանքների կազմակերպման նպատակով, ծրագրում նախատեսված են մեքենա-մեխանիզմների ձեռքբերման միջոցառումներ:

Ծրագրում ներառված ավտոմեքենաների ձեռքբերումները նպատակաուղղված են թարմացնելու Ընկերության տրանսպորտային պարկը: 10-15 տարուց ավել շահագործվող՝ ֆիզիկապես և բարոյապես մաշված տրանսպորտային միջոցները (օպերատիվ, վթարային, վթարավերանորոգման, բեռնատար և հատուկ), որոնց տեխնիկական սպասարկումները և ընթացիկ նորոգումները պահանջում են զգալի ֆինանսական միջոցներ, ինչի արդյունքում դրանց հետագա շահագործումը դառնում է ոչ նպատակահարմար, նախատեսվում է փոխարինել նոր, արդիական տրանսպորտային միջոցներով: Ծրագրով նախատեսվում է նաև ավտոմեքենաների վերասարքավորման նպատակով՝ բնական զագով լիցքավորման համար անհրաժեշտ միջոցառումներ:

Մասնավորապես Ծրագրով 2018 թվականին նախատեսվում է՝

1. Օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում.
  - թվով 3 հատ միջին դասի թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերմամբ նախատեսվում է փոխարինել 10 տարուց ավել շահագործվող ավտոմեքենաները,
  - թվով 8 հատ փոքր դասի թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերումը նպատակաուղղված է փոխարինելու ԳԳ մասնաճյուղերում 10-15 տարուց ավել շահագործվող, ֆիզիկապես մաշված օպերատիվ ավտոմեքենաները,
  - թվով 1 հատ օպերատիվ միկրոավտոբուսի և 1 հատ օպերատիվ ավտոբուսի ձեռքբերում («Հրազդան-5» հիմնարկի համար),
2. Վթարային ավտոմեքենաների ձեռքբերում.
  - վթարային ավտոպարկի թարմացման նպատակով նախատեսվում է ձեռքբերել թվով 5 հատ վթարային բեռնատար ավտոմեքենաներ ֆուրգոն տիպի թեթև

մարդատար ավտոմեքենայի բազայի վրա, թվով 6 հատ ֆուրգոն տիպի բազայի վրա, 4.5տ բեռնատարողությամբ վթարային-վերանորոգման և թվով 6 հատ բարձր անցողունակության բեռնատար ֆուրգոն՝ մինչև 1.5տ բեռնատարողությամբ ավտոմեքենաներ:

3. Բեռնատար ավտոմեքենաների ձեռքբերում.

- ԳԳ մասնաձյուղերում շահագործվող ֆիզիկապես մաշված բեռնատար տրանսպորտի փոխարինման նպատակով, նախատեսվում է ձեռքբերել թվով 2 հատ 1.5 տ բեռնատարողությամբ և թվով 2 հատ 4.5տ բեռնատարողությամբ բեռնատարներ:

4. Հատուկ նշանակության ավտոմեքենաների ձեռքբերում.

- Ընկերության ԳԳՄ-ներում 20 տարուց ավել շահագործվող, տեխնիկական սպասարկման և ընթացիկ վերանորոգման համար զգալի ֆինանսական միջոցներ պահանջող ավտոկոունկները փոխարինելու, նախատեսվում է ձեռքբերել 1 հատ ավտոկոունկ ՄԱԶ տիպի և 2 հատ հատուկ նշանակության ավտոմեքենա՝ մեկ խցիկով և ամբարձիչ-մանիպուլյատորով:

5. Շինարարական տեխնիկայի ձեռքբերում.

- ԳԳ մասնաձյուղերին հատկացված ԾՕ 26-21 տիպի էքսկավատորները, որոնք շահագործման տարիների ընթացքում նույնպես ֆիզիկապես և բարոյապես մաշվել են, աստիճանաբար փոխարինելու նպատակով՝ 2018թ.-ին նախատեսվում է ձեռք բերել թվով 2 հատ JCB 3CX տիպի (կամ նմանատիպ) և 1 հատ ասֆալտբետոնյա շերտը կտրող մեքենայի (Q420 մակնիշի կամ նմանատիպ) ձեռքբերում:

6. Ավտոմեքենաների վերասարքավորում՝ բնական գազով լիցքավորման համար.

- միջին դասի թվով 4 թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների վերասարքավորում:
- ցածր դասի թվով 8 թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների վերասարքավորում:
- թվով 5 թեթև մարդատար ավտոմեքենայի բազայի վրա վթարային բեռնատար ավտոմեքենաների վերասարքավորում:
- թվով 6 հատ մինչև 4.5տ բեռնատարողությամբ վթարային բեռնատար ավտոմեքենաների վերասարքավորում:
- թվով 6 հատ մինչև 1.5տ բեռնատարողությամբ բարձր անցողունակության վթարային բեռնատար ավտոմեքենաների վերասարքավորում:
- թվով 2 մինչև 1,5տ բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաների վերասարքավորում:
- թվով 2 մինչև 4,5տ բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաների վերասարքավորում:

***Ստորև բերվում են ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները.***

Աղյուսակ 2.2.4

Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)					
			2018թ.		2019թ.		2020թ.	
			քան.	գումար	քան.	գումար	քան.	գումար
<b>1</b>	<b>Օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում*, այդ թվում՝</b>	<b>հատ</b>	<b>11</b>	<b>89.29</b>	<b>14</b>	<b>126.73</b>	<b>8</b>	<b>75.68</b>
1.1	թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում (միջին դասի)	հատ	3	38.41	3	38.41	1	12.80
1.2	թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում (ցածր դասի)	հատ	8	50.88	10	63.60	6	38.16
1.3	Օպերատիվ միկրոավտոբուսների ձեռքբերում	հատ		0.00	1	24.72	1	24.72
<b>2</b>	<b>Վթարային ավտոմեքենաների ձեռքբերում, այդ թվում՝</b>	<b>հատ</b>	<b>17</b>	<b>167.90</b>	<b>17</b>	<b>193.56</b>	<b>11</b>	<b>111.28</b>
2.1	վթարային բեռնատար ավտոմեքենաներ ֆուրգոն տիպի թեթև մարդատար ավտոմեքենայի բազայի վրա	հատ	5	24.20	4	19.36	2	9.68
2.2	ֆուրգոն տիպի բազայի վրա, 4.5 տ բեռնատարողությամբ վթարային-վերանորոգման ավտոմեքենաներ	հատ	6	108.90	8	145.20	4	72.60
2.3	բարձր անցողունակության բեռնատար ֆուրգոն ավտոմեքենաներ՝ մինչև 1.5 տ բեռնատարողությամբ	հատ	6	34.80	5	29.00	5	29.00
<b>3</b>	<b>Բեռնատար ավտոմեքենաների ձեռքբերում, այդ թվում՝</b>	<b>հատ</b>	<b>4</b>	<b>34.02</b>	<b>6</b>	<b>51.03</b>	<b>2</b>	<b>17.01</b>
3.1	բեռնատար ավտոմեքենաներ՝ մինչև 1.5 տ բեռնատարողությամբ	հատ	2	13.50	3	20.25	1	6.75
3.2	բեռնատար ավտոմեքենաներ՝ մինչև 4.5 տ բեռնատարողությամբ	հատ	2	20.52	3	30.78	1	10.26
<b>4</b>	<b>Հատուկ նշանակության ավտոմեքենաների ձեռքբերում, այդ թվում՝</b>	<b>հատ</b>	<b>3</b>	<b>91.00</b>	<b>4</b>	<b>114.70</b>	<b>2</b>	<b>67.30</b>
4.1	ավտոկորունկ ՄԱԶ տիպի	հատ	1	43.600	1	43.600	1	43.600
4.2	հատուկ նշանակության ավտոմեքենա՝ մեկ խցիկով և ամբարձիչ-մանիպուլյատորով	հատ	2	47.400	3	71.100	1	23.700
<b>5</b>	<b>Շինարարական տեխնիկայի ձեռքբերում, այդ թվում՝</b>	<b>հատ</b>	<b>3</b>	<b>77.19</b>	<b>2</b>	<b>76.44</b>	<b>2</b>	<b>76.44</b>
5.1	անվավոր JCB 3CX տիպի էքսկավատոր-ամբարձիչ, 0.7մ <sup>3</sup> շերտեփի տարողությամբ, հագեցած հիդրավլիկ մուրճով և խրամուղային շերտեփով	հատ	2	76.440	2	76.440	2	76.440
5.2	Ասֆալտ-բետոն կտրող մեքենայի (մոտորով) Q420 մակնիշի ձեռքբերում	հատ	1	0.750	0		0	
<b>6</b>	<b>Ավտոմեքենաների վերասարքավորում՝ բնական գազով լիցքավորման համար այդ թվում՝</b>	<b>հատ</b>	<b>33</b>	<b>18.20</b>	<b>37</b>	<b>20.86</b>	<b>21</b>	<b>11.78</b>

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)					
			2018թ.		2019թ.		2020թ.	
			քան.	գումար	քան.	գումար	քան.	գումար
6.1	միջին դասի թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների վերասարքավորում	հատ	4	2.00	3	1.50	1	0.50
6.2	ցածր դասի թեթև մարդատար օպերատիվ ավտոմեքենաների վերասարքավորում	հատ	8	3.60	10	4.50	6	2.70
6.3	միկրոավտոբուսների վերասարքավորում	հատ	0	0.00	1	0.60	1	0.60
6.4	թեթև մարդատար ավտոմեքենայի բազայի վրա վթարային բեռնատար ավտոմեքենաների վերասարքավորում	հատ	5	2.20	4	1.76	2	0.88
6.5	մինչև 4.5 տ բեռնատարողությամբ վթարային բեռնատար ավտոմեքենաների վերասարքավորում	հատ	6	4.20	8	5.60	4	2.80
6.6	մինչև 1.5 տ բեռնատարողությամբ բարձր անցողունակության վթարային բեռնատար ավտոմեքենաների վերասարքավորում	հատ	6	3.60	5	3.00	5	3.00
6.7	մինչև 1,5 տ բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաների վերասարքավորում	հատ	2	1.20	3	1.80	1	0.60
6.8	մինչև 4,5 տ բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենաների վերասարքավորում	հատ	2	1.40	3	2.10	1	0.70
<b>Ընդամենը`</b>			<b>477.60</b>		<b>583.32</b>		<b>359.49</b>	

Աղյուսակ 2.2.4.1

Ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերում («Հրազդան-5» հիմնարկի համար)

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)					
			2018թ.		2019թ.		2020թ.	
			քան.	գումար	քան.	գումար	քան.	գումար
1	Օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերում*, այդ թվում`	հատ	2	51.36		0.00		0.00
1.1	Օպերատիվ միկրոավտոբուսի ձեռքբերում	հատ	1	6.96		0.00		0.00
1.2	Օպերատիվ ավտոբուսի ձեռքբերում	հատ	1	44.00		0.00		0.00
<b>Ընդամենը`</b>			<b>51.36</b>		<b>0.00</b>		<b>0.00</b>	

\*Հիմք ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետը` մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման գումարները ներկայացված են ԱԱՀ-ով:

## ԲԱԺԻՆ 3

**2018-2020 թթ. ամփոփ ներդրումներ**



## Բաժին 3. 2018-2020 թթ. ամփոփ ներդրումներ

Հանրապետության գազասպառողներին հուսալի, անխափան և անվտանգ գազամատակարարման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 2018-2020թթ. նախատեսում է իրականացնել ստորև բերված ամփոփ աղյուսակում ներկայացված միջոցառումները (Աղյուսակ 3) և դրանց համապատասխան կապիտալ ներդրումները, որոնց գումարները բերված են առանց ավելացված արժեքի հարկի:

Աղյուսակ 3

### 2018-2020 թթ. Ներդրումային Ծրագրով նախատեսվող ներդրումների ԱՄՓՈՓ ԱՂՅՈՒՍԱԿ

№	Միջոցառումների անվանումը	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)			
		2018 թ	2019 թ	2020 թ	Ընդամենը
<b>Բաժին 1. Գազափոխադրման համակարգ</b>					
1.2.1	Մայրուղային նոր գազատարների կառուցում	2 555.06	1 828.50	3 300.00	7 683.56
1.2.2	Ժամանակակից տեխնիկայի ձեռքբերում՝ սարքավորումներ, սարքեր և գործիքներ	36.78	0.00	0.00	36.78
1.2.3	Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում	254.92	701.43	160.76	1 117.11
1.2.4	Հողատարածքների, շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի ձեռքբերում	3.00	3.00	3.00	9.00
1.2.5	Աբովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնում (նոր օբյեկտների կառուցում)	145.67	630.12	18 698.23	19 474.02
<b>Ընդամենը ըստ Բաժին 1-ի՝</b>		<b>2 995.43</b>	<b>3 163.05</b>	<b>22 161.99</b>	<b>28 320.47</b>
<b>Բաժին 2. Գազաբաշխման համակարգ</b>					
2.2.1	Բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերում և տեղադրում նոր բաժանորդների համար	380.00	313.00	272.00	965.00
2.2.2	Անվտանգության համակարգերի ձեռքբերում և տեղադրում	324.50	265.50	221.25	811.25
2.2.3	Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի, ժամանակակից սարքավորումների, սարքերի և գործիքների	331.68	403.94	251.69	987.31

№	Միջոցառումների անվանումը	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն դրամ)			
		2018 թ	2019 թ	2020 թ	Ընդամենը
	ձեռքբերում				
2.2.4	Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում	528.96	583.32	359.49	1 471.77
<b>Ընդամենը ըստ Բաժին 2-ի`</b>		<b>1 565.14</b>	<b>1 565.76</b>	<b>1 104.43</b>	<b>4 235.33</b>
<b>Ընդամենը Ներդրումային Ծրագրով`</b>		<b>4 560.57</b>	<b>4 728.81</b>	<b>23266.42</b>	<b>32 555.80</b>

*Ներդրումային ծրագրում ներկայացված շինհավաքակցման, աշխատանքները  
 իրականացվելու են  
 նախագծա-նախահաշվային փաստաթղթերի, կատարողական ակտերի  
 կամ թերության ակտերի հիման վրա:*

## Ներդրումային ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

Վերոհիշյալ միջոցառումների իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուրներ նախատեսվում են «Գազպրոմ Արմենիա» սեփական և փոխառու միջոցները:

Այսպիսով, 2018-2020թթ. Ներդրումային Ծրագրով Ընկերության գազի համալիրում նախատեսվող կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 32.56 մլրդ. դրամ, այդ թվում՝

- 2018 թ. - 4 560.57 մլն դրամ,
- 2019 թ. - 4 728.81 մլն դրամ,
- 2020 թ. – 23 266.42 մլն դրամ:

ընդ որում, գազափոխադրման համակարգում 2018-2020թթ. Ծրագրով նախատեսվող կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 28320.47 մլն դրամ, իսկ գազաբաշխման համակարգում՝ 4235.33 մլն դրամ:

Ծրագրում ընդգրկված 2019 և 2020 թվականներին նախատեսված աշխատանքները, ձեռքբերումները և նրանց համապատասխան կապիտալ ներդրումները կանխատեսված են 2018թ.-ին ներկայացված աշխատանքների ցանկի և նրանց համապատասխան ներդրումների հիման վրա: 2019 և 2020թթ. համար բերված աշխատանքները և նրանց համապատասխան կապիտալ ներդրումները կարող են փոփոխվել՝ կախված 2018թ.-ին Ծրագրի իրականացման գործընթացից, կատարված աշխատանքների շեղումներից, օրացուցային գրաֆիկից և ձեռքբերումների համար նախատեսված ժամկետներից, ինչպես նաև փաստացի կատարված կապիտալ ներդրումներից և Ընկերության ֆինանսատնտեսական վիճակից:

Զարգացման ներդրումային ծրագրերի բաժնի պետ	.....	Ա. Գաբրիելյան
ԳՏՑ, ԱԳԼՃԿ, ՀԳՊ և ԱԳԼԿ Շ և Ս բաժնի պետ	.....	Վ. Ասրիյան
ԳԲՑ և ՆԳՀ Շ ու Ս բաժնի պետ	.....	Յու. Նազարյան
Տեխնիկական բաժնի պետ	.....	Հ. Սարգսյան
ՏՏ և ԳՎ բաժնի պետ	.....	Ա. Գրիգորյան
Հիմնական միջոցների շինարարության, վերանորոգման եւ վերակառուցման կազմակերպման բաժնի պետ	.....	Ռ. Բալայան
Գույքի կառավարման բաժնի պետ	.....	Վ. Հակոբյան
Տրանսպորտային ծառայության պետ- գլխավոր մեխանիկ	.....	Ա. Առաքելյան
Ֆինանսական բաժնի պետ	.....	Ա. Համբարյան
Պլանա-տնտեսագիտական բաժնի պետ	.....	Վ. Մաթևոսյան
ՄԳՆ և Ա բաժնի պետ	.....	Ա. Խաչիկյան
Կոմերցիայի բաժնի պետ	.....	Կ. Ամիրխանյան
«Տրանսգազ» ՍՊԸ տնօրենի տեղակալ	.....	Դ. Հակոբյան
«Տրանսգազ» ՍՊԸ ԳՀՇ և Ս բաժնի պետ	.....	Վ. Մարգարյան
«Տրանսգազ» ՍՊԸ Տեխնիկական բաժնի պետ	.....	Հ. Թումակյան